իբրու ամեհի ալիս ծովու յուզեալք ի բռնութենէն հողմոց դարիւ և դարիւ զային մի զմիով անցանէին, և ի մեքենայից անտի ի վերայ պարըսպացն դիմէին, և առհասարակ յերկոցունց կողմանցն ձայն փողոյ, ձայն սուսերաց, գոչիւն զօրաց, շառաչիւն հրալից գնդակաց, ճայթմունք հրացանից, զականջս խլացուցանէին։

Իսկ որք ի ներքս էին իբրեւ զայն ահեղ տեսիլ ի յամրոցէ անտի տեսանէին զգնդաց գնդաց այլասեռիցն՝ դրօշու դրօշու պատրաստութիւն, զնշանացն փողփողել, և զճառագայթս զինուցն զինուորաց, զզանգակսն հնչեցուցանէին, զնշխարս ձեռաց սրբոյն մինայի ի բազմոցի դնէին, և ամենեքեան անկեալ առաջի սրբոյ սեղանոյն առ Աստուած գոչէին. եպիսկոպոսունք, քահանայք, ամենայն ժողովրդականք, և կուսանք (զի անդ էր նաեւ մենարան ինչ կուսանաց, ուր բնակէին քառասուն կամ յիսուն կուսանք) զի ամենեքեան զմահն առաջի աչաց ունէին. (էջ 138–39)։

Ո՞վ աքանչելեաց, ո՞վ մեծի ողորմութեանցն աստուծոյ, երեք հարիւր վառեալք ի յութերորդ ժամու աւուրն ձայն ետուն, խրախոյս բարձին, յարձակեցան միանգամայն ի վրայ եօթանասուն հազարաց, զառաջինն յարձակեցան ի վերայ յաջակողմեան գնդի նոցա յաջ և յահեակ կոտորելով։

Իսկ նոքա յանկարծակի իբրեւ տեսին զայն ահեղ յարձակումն և կոտորած ի վերայ ինքեանց հասեալ, առ հասարակ խռովեալք և խուճապեալք դիմեցին յերկրորդ, և յերրորդ խումբսն զաղաղակ բարձեալ թէ հասին կոտորեցին սպառեցին զմեզ քրիստոնեայքն, և զայն իբրեւ լուան ամենեքեան հիացան, ափշեցան տկարացան ի խորհուրդս իւրեանց, լքան լուծան, և անկաւ ահ ի տեառնէ ի վերայ նոցա. զի մինչդեռ ակն ունէին մեծի յաղթութեան, զբոամբ ածելոյ զամուրն, յանկարծակի եհաս նոցա այն անողորմ կոտորած (էջ 40)։

Եւ յետ այսորիկ բաթալի խանն, և զօրք օսմանցւոց, ի գիշերի միում գան, և հարկանեն զերիս գիւղս հայոց, և կալեալ զերիս զօրապետս ածեն ի պարկուշատ։ Եւ իբրեւ զայն լսէր տէր աւետիսն՝ վաղվաղակի զզօրսն ժողովէր, և յետ երկուց աւուրց յերկիրն պարկուշատայ արշաւէր, և գիշերայն ի վերայ հասանէր, հարկանէր զհարուածս մեծամեծս, և զերկու թուրք զօրապետս ձերբակալ առնէր, և զամենայն ինչս և զստացուածս նոցա յաւար ածէր ի չալնդուր։

իբրու ամեհի ալիս ծովու յուզեալք ի բռնութենէ հողմոց դարիւ և դարիւ զային, մի զմիով անցանէին, և ի մեքենայից անտի ի վերայ պարըսպացն դիմէին, և առ հասարակ յերկոցունց կողմանց ձայն փողոյ, և ձայն թմբկաց, գոչիւն զօրաց, շառաչիւն հրալից գնդակաց, ճայթմունք հրացանից զականջս խլացուցանէին։

14. Իսկ որք ի ներքս էին, իբրեւ զայն ահեղ տեսիլ ի յամրոցէ անտի տեսանէին, զգնդաց գնդաց այլասեռիցն, դրօշու դրօշու պատրաստութիւն, զնշանացն փողփողել, և զճառագայթս զինուցն զինուորաց. զզանգակս հնչեցուցանէին, զնշխարս սրբոյն Մինասայ ի բազմոցի դնէին, և ամենեքեան անկեալ առաջ սրբոյ սեղանոյն առ Աստուած գոչէին, Եպիսկոպոսունք, Քահանայք և ամենայն ժողովրդականքն, և կուսանք (զի էր անդ նաեւ Մենարան ինչ կուսանաց, ուր բնակէին քառասուն, կամ յիսուն կուսանք), զի ամենեքեան զմահն առաջի աչաց ունէին (էջ 48–49)։

17. Ո՞վ աքանչելեաց, ո՞վ մեծի բարեգթութեանցն Աստուծոյ, զի երեք հարիւր (300) վառեալք ի յութերորդ ժամու աւուրն, ձայն ետուն խրախոյս բարձին, յարձակեցան միանգամայն ի վերայ եօթանասուն հազարաց (70000). առաջինն յանկարծակի յարձակեցան ի վերայ յաջակողմեան գնդի նոցա յաջ և յահեակ կոտորելով։

18. Իսկ նոքա յանկարծակի իբրեւ տեսին զայն ահեղ յարձակումն և կոտորած ի վերայ ինքեանց հասեալ, առ հասարակ խռովեալք, և խուճապեալք դիմեցին ի յերկրորդ, և ի յերրորդ խումբսն զաղաղակ բարձեալ թէ հասին՝ կոտորեցին զմեզ քրիստոնեայքն. և զայն իբրեւ լուան ամենեքեան՝ հիացան, ափշեցան, տկարացան ի խորհուրդս իւրեանց, լքան, լուծան և անկաւ ահ ի Տեառնէ ի վերայ նոցա. զի մինչդեռ ակն ունէին մեծի յաղթութեան, զբոամբ ածելոյ զամուրն, յանկարծակի եհաս նոցա այն անողորմ կոտորածն (էջ 50–51)։

58. Եւ յետ այսորիկ Բաթալի խանն, և զօրքն Օսմանցւոց ի գիշերի միում գան, և հարկանեն զերիս գիւղս Հայոց, և կալեալ զերիս զօրապետս ի Բարքուշատ ածեն։ Եւ իբրեւ զայն լսէր Տէր Աւետիսն, վաղվաղակի զզօրսն ժողովէր, և յետ երկուց աւուրց յերկիրն Բարքուշատայ արշաւէր, և գիշերայն ի վերայ հասանէր, հարկանէր զհարուածս մեծամեծս, և զերկու Թուրք զօրապետսն ձերբակալ առնէր, և զամենայն ինչս և զստացուածս նոցա աւար ածէր ի Չալնդուր։